

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արփինե Մեխակի Կյուրեղյան  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ, հայցորդ

ՀՀ առանձին ոլորտների տեսակարար կշիռների համեմատական վերլուծության արդյունքում համեմատումը հիմնավորվել է, որ հատկապես ՀՆԱ-ում առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում գյուղատնտեսության ոլորտը, ուստի աշխատանքում մշակվել և առաջարկվել է ռեգրեսիոն բանաձև, որը գործնականում հաշվարկվել է համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշների համար՝

$$Y = a_0 + a_1 EX_a + a_2 TB + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ՝

Y – համախառն ներքին արդյունքն է

(այսուհետև՝ ՀՆԱ, մլն դրամ)

EX<sub>a</sub> – պարենամթերքի արտահանումն է (մլն դրամ)

TB – հարկային բեռն է (որը հաշվարկվել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ)

a<sub>0</sub>, a<sub>1</sub>, a<sub>2</sub> – հաստատուն մեծության և անկախ փոփոխականների էլաստիկության գործակիցներն են

ε<sub>t</sub> – պատահական սխալի մեծությունն է:

Վերլուծության համար դիտարկվել է 1997-2018թթ. համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները (տես՝ աղյուսակ 1-ը): Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 22 են, իսկ դա նշանակում է, որ աստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

Նշված մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eview 9<sup>1</sup> համակարգչային ծրագրային հնարավորությունից իրականացվել է համապատասխան ռեգրեսիոն վերլուծություն: Մինչ մոդելի գնահատելը տվյալների համահարթեցման նպատակով տվյալները լոգարիթմել ենք, որպեսզի խուսափենք կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց: Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքները արտացոլված են աղյուսակ

<sup>1</sup> Eviews-ը հանդիսանում է Micro TSP փաթեթի Windows տարբերակը, որը պարունակում է զարգացած «հուշում» (help), որն, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews-ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ. հասցեում՝ <http://www.eviews.com/home.html>:

2-ում, որտեղ ներկայացված է  $a_0, a_1, a_2$ , գնահատման արդյունքում ստացված գործակիցները և նրանց վիճակագրական հատկությունները՝ t-վիճականի, F-վիճականի, Prob.<sup>1</sup>:

Աղյուսակ 1

1997-2018 թթ. համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշները ՀՀ-ում (մլն դրամ)<sup>2</sup>

	Համախառն ներքին արդյունք	Հարկային բեռ	Պարենամթերքի արտահանում
1997	804336	0.1279	8392.167
1998	955385	0.13648	9138.509
1999	987444	0.16082	9256.538
2000	1031338	0.31625	15807.94
2001	1175877	0.31467	27365.44
2002	1362472	0.3214	40879.86
2003	1624643	0.30529	46995.31
2004	1907945	0.3072	44383.04
2005	2242881	0.31603	52222.43
2006	2656190	0.31667	51089.71
2007	3149283	0.34982	58016.77

<sup>1</sup> **Елисеева И.И.** Эконометрика: учеб./под ред. Елисеевой И.И. -М.: 2009, сс. 25-28.

<sup>2</sup> ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝ «Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշներ» 2008թ., 2014թ., 2018թ., 2019., էջեր 20, 27, 35, 9

[https://www.armstat.am/file/article/hah\\_08\\_0.pdf](https://www.armstat.am/file/article/hah_08_0.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/hah\\_14\\_2+.pdf](https://www.armstat.am/file/article/hah_14_2+.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/hah\\_18\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/hah_18_2.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2019\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_2_2019_1.pdf) :

Հրապարակումներ «Պարենային ապահովություն և աղքատություն» 2003թ., 2006թ., 2011թ., 2015թ., 2019թ., էջեր 6, 10, 10, 10, 9

<https://www.armstat.am/file/article/paren-03-02-iii.1.1..pdf> ,  
[https://www.armstat.am/file/article/food\\_3\\_06\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/food_3_06_1.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_3\\_11\\_4.1-4.2.doc.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_3_11_4.1-4.2.doc.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_3\\_2015\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_3_2015_4.pdf) ,  
[https://www.armstat.am/file/article/f\\_sec\\_2\\_2019\\_1.pdf](https://www.armstat.am/file/article/f_sec_2_2019_1.pdf) ,

Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝

<http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017>,  
<http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTITaxStatData>:

2008	3568228	0.16781	61102.21
2009	3141651	0.16021	49778.94
2010	3460203	0.1659	63709.03
2011	3777946	0.16724	88319.75
2012	4266461	0.20588	129496.9
2013	4555638	0.22441	169914.5
2014	4828626	0.2275	177389.8
2015	5032089	0.2304	195756
2016	5067293.5	0.22601	250527.4
2017	5568901.5	0.2126	304563
2018	4746777	0.215665	76396.5

Դրանք հնարավորություն են տալիս ստուգել գնահատված գործակիցների վիճակագրական արժեքականության, կամ որ նույնն է՝ կախյալ ու անկախ փոփոխականների միջև գծային կախվածության առկայության մասին վարկածը:

Գնահատված գործակիցների արժեքականությունը ստուգելու համար (Ստյուդենտի t-վիճականու դեպքում) դրվում է զրոյական վարկած այն մասին, որ գծային ռեգրեսիայի տվյալ գործակիցը հավասար է զրոյի, օրինակ՝  $H_0: \beta^1=0$ , մրցակցող վարկածն է՝  $H_1: \beta^1 \neq 0$ : Վարկածը ստուգվում է t վիճականու հաշվարկված արժեքը՝ արժեքականության  $\alpha$  մակարդակում Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքի հետ համեմատելու միջոցով: Եթե տեղի ունի՝  $|t| > t_{n-p,1-\alpha/2} (2)^1$ , ապա  $H_0$ -ն մերժվում է՝ տվյալ  $\alpha$  (5% սխալվելու հավանականությամբ) արժեքականության մակարդակում: Նշանակում է  $\beta^1$  -ը արժեքական է՝ արժեքականության  $\alpha$  մակարդակում, այսինքն՝ նշանակալիորեն տարբերվում է զրոյից և համապատասխան  $\beta$ -ն բացատրում է կախյալ փոփոխականի փոփոխությունը: Հակառակ դեպքում  $H_0$ -ն չի կարող մերժվել՝ տվյալ  $\alpha$  (5% սխալվելու հավանականությամբ) արժեքականության մակարդակում: Նշենք, որ այստեղ՝  $t_{n-p,1-\alpha/2}$ -ը Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքն է  $\alpha$  արժեքականության մակարդակի համար,  $n-p$  ազատության աստիճանով (որտեղ  $n$ -ը

<sup>1</sup> **Ջրբաշյան Ն.** «Էկոնոմետրիկ մոդելավորումը EViews փաթեթի օգտագործմամբ» Ուսումնամեթոդական ձեռնարկ, «ՆՈՐ - ԴԱՐ» Հրատարակչություն, Երևան, 2013թ., 48 էջ:

դիտարկումների քանակն է, իսկ  $p$ -ն՝ գնահատվող պարամետրերի/գործակիցների թիվը)<sup>1</sup>: Eviews-ում Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքը ստանալու համար դրա գլխավոր պատուհանի հրամանների տողում կարելի է գրառել՝  $=@qtdist(v,n-p)$ , որտեղ՝  $v=1-\alpha/2$ , իսկ  $n-p$ -ն ազատության աստիճանն է: Enter կոճակը սեղմելուց հետո գլխավոր պատուհանի կարգավիճակի տողում կերևա գրառում՝  $Scalar=...$ , որն էլ հենց Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքն է<sup>2</sup>:

F վիճականու միջոցով ստուգվում է ռեգրեսիայի ամբողջ հավասարման վիճակագրական արժեքականությունը, կամ՝ միասին վերցված բոլոր ռեգրեսիայի գործակիցների (բացի ազատ անդամից) զրո լինելու մասին վարկածը: Դրվում է գրոյական վարկած՝  $H_0 : \beta_1 = \beta_2 = \dots = \beta_{p-1} = 0$ , երբ ստուգվում է F վիճականու արժեքը Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության  $F_{կրիտ}$  արժեքի հետ համեմատելու միջոցով: Վերջինս բնութագրվում է  $\alpha$  արժեքականության մակարդակով և  $(p-1, n-p)$  ազատության աստիճաններով, որտեղ  $p$ -ն գնահատվող պարամետրերի/գործակիցների քանակն է, իսկ  $n-p$ -ն՝ դիտարկումների քանակը: Եթե  $F > F_{կրիտ}$ ,  $H_0$ -ն մերժվում է՝ տվյալ  $\alpha$  արժեքականության մակարդակում, ինչը նշանակում է, որ ռեգրեսիայի հավասարումն արժեքական է, այսինքն՝ անկախ փոփոխականները բացատրում են կախված փոփոխականի փոփոխությունը: Հակառակ դեպքում՝  $\alpha$  արժեքականության մակարդակում այն չի կարող մերժվել<sup>3</sup>: Eviews-ում Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքը ստանալու համար դրա գլխավոր պատուհանի հրամանների տողում պետք է գրառել՝  $=@qfdist(v,k1,k2)$ , որտեղ  $v=1-\alpha$ ,  $k1=p-1$ ,  $k2=n-p$ : Enter կոճակը սեղմելուց հետո գլխավոր պատուհանի կարգավիճակի տողում կերևա գրառում՝  $Scalar=...$ , որն էլ հենց Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքն է<sup>4</sup>:

Բացի այդ, մոդելի որակական հատկանիշները ըմբռնելու համար տրված են հետևյալ ցուցանիշները՝  $R^2$ , ճշգրտված  $R^{25}$ :

<sup>1</sup> Տես նույն տեղում:

<sup>2</sup> Մոդելում  $n=22$ ,  $p=3$ ,  $n-p=19$ ,  $\alpha=0.05$  արժեքականության մակարդակի դեպքում  $v=1-\alpha/2$ ՝  $v=0.975$ , Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ 2.09:

<sup>3</sup> **Ջրբաշյան Ն.** «Էկոնոմետրիկ մոդելավորումը EViews փաթեթի օգտագործմամբ» Ուսումնասանթոդական ձեռնարկ, «ՆՈՐ - ԴԱՐ» Հրատարակչություն, Երևան, 2013թ., 53 էջ:

<sup>4</sup> Մոդելում  $n=22$ ,  $p=3$ ,  $\alpha=0.05$  արժեքականության մակարդակի դեպքում  $v=0.95$   $k1=2$ ,  $k2=19$ , Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝  $F_{կրիտ}=3.52$ :

<sup>5</sup> **Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А.** Эконометрика // Издательство «Дело», М., 2004, с. 67.

Մոդելի գնահատման արդյունքները<sup>1</sup>

Գործակից	t-վիճականի	Prob.	R <sup>2</sup>	Ճշգրտված R <sup>2</sup>	F-վիճականի
7.911378	15.58336	0.0000	0.920422	0.912046	109.8801
0.571027	14.81360	0.0000			
-0.367334	-2.764776	0.0123			

Իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ևս հաստատում են, որ դիտարկվող գործոնների և ՀՆԱ-ի միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն, քանի որ դետերմինացվածի գործակիցը (R<sup>2</sup>) հավասար է 0.92, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 92%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 8%-ը՝ պատահական սխալներով: Սա նշանակում է, որ 92%-ի դեպքում ՀՆԱ-ի տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացվածի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R<sup>2</sup>) հավասար է 0.91 այսինքն 91% ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցը ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի այն նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն, ինչպես նաև գնահատված գործակիցների արժեքականությունը ստուգող Ստյուդենտի t-վիճականու պայմանը ևս բավարարված է, այսինքն՝ Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքի դեպքում՝ 2.09, ինչպես նաև 2 հավասարման հետ համեմատելով, պետք է նշել, որ  $\beta^0, \beta^1, \beta^2$  -ը արժեքական է՝ արժեքականության  $\alpha$  մակարդակում (5% սխալվելու հավանականությամբ), քանի որ  $\beta^0=15.58336 > 2.09$ ,  $\beta^1 = 14.81360 > 2.09$ ,  $\beta^2 = -2.764776 > 2.09$ :

Ռեգրեսիայի ամբողջ հավասարման վիճակագրական արժեքականությունը ստուգող F վիճականու պայմանը ևս բավարարված է, այսինքն՝ Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝  $F_{կրիտ}=3.52$ , փոքր է F վիճականու արժեքից՝  $F=109.8801$ , հետևաբար, հավասարումն արժեքական է արժեքականության  $\alpha$  մակարդակում (5% սխալվելու հավանականությամբ):

Արդյունքում գնահատված գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են՝

$$Y=7.911378+0.571027EX_a-0.367334TB \quad (3)$$


<sup>1</sup> Հաշվարկվել է հեղինակի կողմից:

Արդյունքում՝ (3) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության միջոցով կարելի է տալ տնտեսագիտական հիմնավորում.

Գյուղատնտեսության ոլորտում արտահանման ծավալները (EX<sub>a</sub>) ավելացնում են համախառն ներքին արդյունքի (Y) 0.57 տոկոսային կետի չափով:

Ներկայացված անկախ փոփոխականներից հարկային բեռն (TB) ունեցել է բացասական ազդեցություն համախառն ներքին արդյունքի (Y) վրա 0.36 տոկոսային կետի չափով, վերջինիս բացասական ազդեցությունը բացատրվում է նրանով, որ գյուղատնտեսության ոլորտը բավականին խնդիրներ ունի կապված պետական աջակցման անբավարար մեխանիզմների զարգացվածության առումով:


Ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականությունը, ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիությունը, բնակլիմայական պայմանները, ապահովագրական պայմանների բացակայությունը կամ թանկ լինելու գործոնները բերում են գյուղատնտեսական ոլորտի ոչ շահութաբեր լինելու հանգամանքին, թեև այս ոլորտը հարկերից ազատված է կամ գործում են հարկային արտոնություններ: Այդ առումով հողվածում առաջարկվել է իրականացնել հասցեական միջոցառումներ, որոնք նոր հարթակներ կձևավորեն պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցության համար (տես՝ գծապատկեր 1-ում):



**Գծապատկեր 1. Պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը<sup>1</sup>**

Գործարար միջավայրի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են փոխարժեքով պայմանավորված արտահանումը և ներմուծումը:

2018 թվականին՝ 2006 թվականի համեմատ, փոխարժեքով պայմանավորված արտահանման և ներմուծման ծավալները ավելացել են, մասնավորապես փոխարժեքով պայմանավորված արտահանումն ավելացել է 544464,5 մլն դրամով, իսկ ներմուծման ծավալը՝ 1657541,3 մլն դրամով (տես՝ գծապատկեր 2-ը):



**Գծապատկեր 2. 2006-2018թթ. արտահանման, ներմուծման և փոխարժեքի շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)<sup>2</sup>**

2018 թվականին փոխարժեքով պայմանավորված նախորդ տարվա նկատմամբ արտահանման ծավալը նվազել է 828423 մլն դրամով: Վերջինիս նվազման պատճառ է հանդիսացել այդ ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումները, ինչը առավել շահեկան է դարձրել ոչ թե ապրանքների արտահանումը, այլ դրանց ներմուծումը: «Էժանացված դոլարային հոսքերի պայմաններում» համաշխարհային շուկայում տեղի է ունեցել ապրանքների գների իջեցում, որը նպաստել է հայ գործարարներին, առավել բարձր գնով վաճառելու ակնկալիքով, ավելի շատ

<sup>1</sup> Կազմվել է հեղինակի կողմից:

<sup>2</sup> ՀՀ Վիճակագրական կոմիտե, Հրապարակումներ՝ «Հայաստանի ազգային հաշիվներ» էջեր՝ 56, 59, 69,

[https://www.armstat.am/file/article/hah\\_12\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/hah_12_6.pdf),

[https://www.armstat.am/file/article/hah\\_16\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/hah_16_6.pdf),

[https://www.armstat.am/file/article/hah\\_18\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/hah_18_6.pdf),

ՀՀ Կենտրոնական բանկ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

ապրանքներ ներմուծեն ՀՀ: Նույն ժամանակահատվածում փոխարժեքի փոփոխությունը ներմուծման ծավալը ավելացրել է 302925,4 մլն դրամով:

Արդյունքում՝ արտահանման նվազման միտումը պայմանավորված է եղել այդ ժամանակահատվածում դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումներով, որը թույլ է տալիս ենթադրելու, որ արտահանումը ՀՀ տնտեսության վրա նշանակալի ազդեցություն դեռևս չունի:

Այսպիսով՝ ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն ունեն պարենամթերքի արտահանումը, սակայն բացասական ազդեցություն ունի հարկային բեռը, հետևաբար այս ոլորտը բավականին խնդիրներ ունի, ուստի առաջարկվել է կիրառել այնպիսի գործիքակազմ (հարկային արտոնությունների տրամադրումը, մաքսային ընթացակարգերի պարզեցումը, օրենսդրական դաշտի կայունացումը), որոնք հնարավորություն կտան պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև՝ ՀՀ-ում փոխարժեքի փոփոխությունն ավելացրել է ներմուծումը, սակայն նվազեցրել է արտահանումը, քանի որ առկա են այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են՝ «էժանացված դոլարային հոսքերի պայմաններում» ներմուծված ապրանքի գնի բարձրացումը, միջազգային համագործակցության կապերի նվազումը, երկրի վարկանիշի նվազումը, պետական բյուջեում եկամուտների հոսքերի կրճատումը, հետևաբար՝ այդ ռիսկերի մեղմացման համար առաջարկվել է իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են՝ դրամ/դոլար փոխարժեքային կուրսի ոչ հաճախակի տատանումը, մաքսային ընթացակարգերի պարզեցումը, վերջիններս էլ կբերեն փոխարժեքի կուրսի փոփոխման պայմաններում արտահանման խթանման:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Արփինե Մեխակի Կյուրեղյան**  
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

**Համառոտագիր**

Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականությունը, ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիությունը, բնակլիմայական պայմանները, ապահովագրական պայմանների բացակայությունը կամ թանկ լինելու գործոնները բերում են գյուղատնտեսական ոլորտի ոչ շահութաբեր լինելու հանգամանքին, ուստի անհրաժեշտ է կիրառել այնպիսի գործիքակազմ (հարկային



արտոնությունների տրամադրումը, մաքսային ընթացակարգերի պարզեցումը, օրենսդրական դաշտի կայունացումը), որոնք կբերեն բիզնես միջավայրի բարելավման և տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման:

**Բանալի բառեր՝** գործարար միջավայր, ՀՆԱ, պարենամթերքի արտահանում, հարկային բեռ, ռեգրեսիոն վերլուծություն, արտահանում, ներմուծում, փոխարժեք:

## МЕХАНИЗМЫ ОЦЕНКИ ПРИОРИТЕТОВ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В КОНТЕКСТЕ УЛУЧШЕНИЯ БИЗНЕС-СРЕДЫ

Арпине Мехаковна Кюрегян

Соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА

### Аннотация

Недостаточное развитие инфраструктуры Республики Армения, отсутствие доступности сельскохозяйственного персонала, отсутствие механизмов финансирования, климатические условия, отсутствие условий страхования или дорогостоящие факторы приводят к невыгодности сельскохозяйственного сектора, поэтому необходимо применять такие инструменты (налоговые льготы, упрощение таможенных процедур, стабилизацию законодательной области), что приведет к улучшению бизнес-среды и повышению экономической активности.

**Ключевые слова:** бизнес-среда, ВВП, экспорт продуктов питания, налоговое бремя, регрессионный анализ, экспорт, импорт, обменный курс.

## MECHANISMS FOR ASSESSING ECONOMIC DEVELOPMENT PRIORITIES IN THE CONTEXT OF IMPROVING THE BUSINESS ENVIRONMENT

Arpine Mekhak Kyuregyan

M. Kotanyan Institute of Economics of NAS RA applicant

### Abstract

The underdeveloped infrastructure of the Republic of Armenia, the lack of collective farming, the lack of financing mechanisms, the climatic conditions, the lack of insurance conditions or the costly factors bring about the non-profitability of the agricultural sector, so it is necessary to use such tools (tax privileges, simplification of customs procedures, stabilization), which will lead to the improvement of the business environment and home increasing the level of self-esteem.

**Keywords:** business environment, GDP, food export, tax burden, regression analysis, export, import, exchange rate.